ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 05.08.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2020/149

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 10.07.2020թ. թիվ 26/26-1/10350-2020 գրությամբ «Սկիֆ Ագրոս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ էկոնոմիկայի նախարարության (հետայսու նաև՝ Պատվիրատու) 07.07.2020թ. թիվ 09/9532-2020 գրության հիման վրա 10.07.2020թ. թիվ 26/26-1/10350-2020 գրությամբ նախաձեռնել է «Սկիֆ Ագրոս» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. **<u>«Սկիֆ Ագրոս» ՍՊԸ -ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«Սկիֆ Ագրոս» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

«Սկիֆ Ագրոս» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/149 ընթացակարգի շրջանակներում 20.07.2020թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. **<u>ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 07.07.2020թ. թիվ 09/9532-2020 գրությամբ հայտնել է, որ տրամադրում է ՀՀ էկոնոմիկայի նախարարության և «Սկիֆ Ագրոս» ՍՊԸ-ի միջև 2020 թվականի փետրվարի 28-ին կնքված «ՀՀ ԷՆ-ԲՄԱՊՁԲ-19/1-53-20» ծածկագրով պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը և տեղեկագրում ծանուցման հրապարակման փաստը հավաստող ապացույցը:

Պատվիրատուն, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04/05/2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետը, խնդրել է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ձեռնարկել համապատասխան միջոցներ՝ «Սկիֆ Ագրոս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու նպատակով:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/149 ընթացակարգի շրջանակներում 20.07.2020թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

<u>4. ՍՑ-ՆԳ-2020/149 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2020/149 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ էկոնոմիկայի նախարարության և «Սկիֆ Ագրոս» ՍՊ ընկերության միջև 28.02.2020թ. կնքվել է թիվ «ՀՀ ԷՆ-ԲՄԱՊՁԲ-19/1-53-20» ծածկագրով պետության կարիքների համար անասնաբուժության մեջ կիրառվող պատվաստանյութերի մատակարարման պայմանագիր, որի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 Հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. Պայմանագրի շրջանակներում կողմերի միջև 01.04.2020թ. կնքվել է համաձայնագիր:

3. Պատվիրատուն Ընկերությանն ուղղված 03.07.2020թ. թիվ 09.18.11/9449-2020 գրությամբ հայտնել է «ՀՀ ԷՆ-ԲՄԱՊՁԲ-19/1-53-20» գնման պայմանագիրը միակողմանի լուծելու մասին:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 10.07.2020թ. թիվ 26/26-1/10350-2020 գրությունը, ՀՀ էկոնոմիկայի նախարարության 07.07.2020թ. թիվ 09/9532-2020 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (հետայսու նաև՝ Օրենսգիրք) 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 466-րդ հոդվածը սահմանում է.

1. Պայմանագրի փոփոխումը և լուծումը հնարավոր է կողմերի համաձայնությամբ, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

2. Պայմանագիրը, կողմերից մեկի պահանջով, կարող է փոփոխվել կամ լուծվել դատարանի վճռով միայն մյուս կողմի թույլ տված՝ պայմանագրի էական խախտման կամ օրենքով կամ պայմանագրով նախատեսված այլ դեպքերում:

Էական է ճանաչվում կողմերից մեկի թույլ տված պայմանագրի խախտումը, որը հանգեցնում է մյուս կողմի համար այնպիսի վնասի, որն զգալիորեն զրկում է վերջինիս այն բանից, ինչը նա իրավունք ուներ ակնկալել պայմանագիրը կնքելիս:

3. Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Օրենսգրքի 468-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ պայմանագրի փոփոխման կամ լուծման համաձայնությունը կնքվում է այն ձևով, ինչով պայմանագիրը, եթե այլ բան չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պայմանագրից կամ գործարար շրջանառության սովորույթներից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների

հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ ***պատվիրատուներն իրենց կարիքների համար գնումներ կատարելու նպատակով կազմակերպված գնման գործընթացների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված տեղեկությունները տեղեկագրում հրապարակում են ինքնուրույն՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի սահմանած կարգով***:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 29-րդ կետի համաձայն՝ գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ ***պայմանագիրը կնքվելու օրվան հաջորդող օրը հանձնաժողովը համարվում է լուծարված:***

Կարգի 33-րդ կետի 12-րդ ենթակետի համաձայն՝ եթե պայմանագիրը կնքվել է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, սակայն տվյալ տարում նախատեսված չեն կամ նախատեսված են ավելի քիչ ֆինանսական միջոցներ, քան պայմանագրի գինն է, ապա պայմանագրում նախատեսվում է, որ հետագայում ապրանքների մատակարարումը, աշխատանքների կատարումը կամ ծառայությունների մատուցումն իրականացվում են համաձայնագիր կնքելու միջոցով (...):

Նույն կետի 17-րդ ենթակետի համաձայն՝ ***պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև պայմանագիր կնքած անձի էլեկտրոնային փոստին:***

28.02.2020թ. կնքված թիվ «ՀՀ ԷՆ-ԲՄԱՊՁԲ-19/1-53-20» գնման պայմանագրի 8.9 կետը սահմանում է.

<u>Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը:</u> Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

Այսպես, ՀՀ էկոնոմիկայի նախարարության և «Սկիֆ Ագրոս» ՍՊ ընկերության միջև 28.02.2020թ. կնքվել է թիվ «ՀՀ ԷՆ-ԲՄԱՊՁԲ-19/1-53-20» ծածկագրով պետության կարիքների համար անասնաբուժության մեջ կիրառվող պատվաստանյութերի մատակարարման պայմանագիր, որի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 Հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի գինը սահմանվել է 222 371 250 ՀՀ դրամ:

Պայմանագրի Հավելված 1-ի՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանվել է, որ ապրանքների մատակարարումը իրականացվելու է համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում և կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման հիման վրա՝ պահպանելով Կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի Ը) պարբերությունը:

Պայմանագրի շրջանակներում կողմերի միջև 01.04.2020թ. կնքվել է համաձայնագիր:

Համաձայնագրի Հավելված 1-ի՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ 3121000 մլ «Անասնաբուժության մեջ կիրառվող կենդանիների դաբաղ հիվանդության նկատմամբ՝ բազմավալենտ, սորբինացված, կուլտուրալ, ակտիվազրկված պատվաստանյութ դաբաղի վիրուսի A Իրան 2005 և AG -VII, O Պան Ասիա-2, Ասիա 1, Sindh-08 տիպերի դեմ պատվաստանյութ» ապրանքի մատակարարման ժամկետ է

սահմանվել 2020 թվականի մայիս ամիսը:

02.06.2020թ Ընկերությունը գրությամբ խնդրել է ապրանքի մատակարարման ժամկետը երկարաձգել մինչև 23.06.2020թ.:

Ի պատասխան նշված գրության Պատվիրատուն թիվ 09.5.2/8010-2020 գրությամբ Ընկերությանը հայտնել է, որ ապրանքի մատակարարման սահմանված ժամկետը երկարաձգվել է մինչև 23.06.2020թ. և խնդրել հաստատել, որ նշված ժամկետում ապրանքը կմատակարվի:

Համաձայն սննդամթերքի անվտանգության վարչության պետին փոխարինող Ա.Դանիելյանի զեկուցագրի ուղղված ՀՀ էկոնոմիկայի նախարարության գլխավոր քարտուղար Ա.Խաչատրյանին՝ Ընկերությունը սահմանված ժամկետներում, այն է՝ մինչև սույն թվականի մայիսի 30-ը և գումարված լրացուցիչ 30 օրը չի մատակարարել պատվաստանյութը:

Պատվիրատուն Ընկերությանն ուղղված ***03.07.2020թ. թիվ 09.18.11/9449-2020 գրությամբ հայտնել է «ՀՀ ԷՆ-ԲՄԱՊՁԲ-19/1-53-20» գնման պայմանագիրը միակողմանի լուծելու մասին:***

28.02.2020թ. կնքված թիվ «ՀՀ ԷՆ-ԲՄԱՊՁԲ-19/1-53-20» գնման պայմանագրի 8.9 կետը սահմանում է, որ ***վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը, մինչդեռ***՝ Պատվիրատուն 03.07.2020թ. թիվ 09.18.11/9449-2020 գրությամբ Ընկերությանը հայտնել է «ՀՀ ԷՆ-ԲՄԱՊՁԲ-19/1-53-20» գնման պայմանագիրը միակողմանի լուծելու մասին, սակայն տեղեկագրի (***www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայք***) ուսումնասիրությունից պարզ է դառնում, ***որ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին նշված ծանուցումը www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում հրապարակված չէ, փոխարենը Պատվիրատուն 02.07.2020թ. հրապարակել է ՀՀ էկոնոմիկայի նախարարության կարիքների համար ԲՄ ընթացակարգի ՀՀ ԷՆ-ԲՄԱՊՁԲ-19/1 ծածկագրով կնքված պայմանագրում փոփոխություն կատարելու մասին հայտարարությունը:***

Այսինքն՝ գնման պայմանագրի 8.9-րդ կետով սահմանված պահանջին համապատասխան, այն է՝ Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու

<u>վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից, Ընկերությունը ծանուցված չի եղել պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ:</u>

Անդրադառնալով 02.07.2020թ. հրապարակված ՀՀ էկոնոմիկայի նախարարության կարիքների համար «ՀՀ ԷՆ-ԲՄԱՊՁԲ-19/1» ծածկագրով կնքված պայմանագրում փոփոխություն կատարելու մասին հայտարարությանը՝ հարկ եմ համարում նշել, որ նշված հայտարարության ռուսերեն թարգմանված տարբերակում նշված է «оценочная комиссия процедуры», այն է՝ «Ընթացակարգի գնահատող հանձնաժողով», մինչդեռ՝ համաձայն Կարգի 29-րդ կետի՝ ***<u>պայմանագիրը կնքվելու օրվան հաջորդող օրը հանձնաժողովը համարվում է լուծարված:</u>***

Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ հայտարարության մեջ նշվել է, որ պայմանագրում Պատվիրատուի կողմից կատարվել է փոփոխություն կնքված պայմանագրում, մինչդեռ պայմանագրի փոփոխությունը և պայմանագրի լուծումը դրանք էապես տարբեր գործընթացներ են և հետևաբար չեն կարող նույնացվել, որը սակայն կատարվել է Պատվիրատուի կողմից՝ հրապարակելով հայտարարությունը:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ Պատվիրատուի կողմից խախտվել են ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետով, Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով, «ՀՀ ԷՆ-ԲՄԱՊՁԲ-19/1-53-20» գնման պայմանագրի 8.9 կետով սահմանված պահանջները, ուստի նման պայմաններում հնարավոր չէ արձանագրել «Սկիֆ Ագրոս» ՍՊԸ-ի կողմից Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պարտավորության խախտման փաստը, հետևաբար գտնում եմ, որ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 10.07.2020թ. թիվ 26/26-1/10350-2020 գրությամբ «Սկիֆ Ագրոս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին

մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**